

ՄԵՐ ԶԱՅՐԵՐՈՒՆ ԽՐԱՏՆԵՐԸ

Ինչպե՞ս «մեր կեանքը յանձնել Քրիստոսի»

Յանձնելու համար մեր կեանքը Քրիստոսի, նախ պետք է անդրադառնալ, որ կորսուած վիճակի մէջ կը գտնուինք եւ կարիքը ունինք փրկուիլու: Անդրադառնալուն պէտք է ընկերանայ փափաքը՝ անկեղծ ու սրտաբուխ փափաքը: Երբեմն Յիսուսի դառնալու մեր փափաքը յանկարծ կրնայ զօրանալ. ասիկա Սուրբ Հոգիին մեր սրտերէն ներս տարած աշխատանքին արդիւնքն է: Երբ նման փափաք արթննայ մեր մէջ, իսկոյն ծնրադրենք եւ ըսենք. «Տէ՛ր Յիսուս, ես քեզի պէտք ունիմ, որպէսզի կարենամ իմ այս վիճակէս դուրս գալ: Կը խոստովանիմ մեղքերս եւ անձս իր ամբողջ տկարութիւններով ու մեղքերով ուղարկուի առջեւ կը դնեմ: Եկո՛ւր եւ թագաւորէ կեանքիս մէջ: Ասկէ ետք դուն եղի՛ր իմ առաջնորդս, կ'աղաչեմ քեզի»:

ՄԵԿ ՏԱՐՈՒՄԱՆ ԸՆԹԱՅԷՆ ԿԱՐԴԱՆՔ ԱՄԲՈՂՁ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՆԸ

Փետրուար 2020

1	Ելից 27,28	Մատթէս 21:1-22
2	Ելից 29,30	Մատթէս 21:23-46
3	Ելից 31,32,33	Մատթէս 22:1-22
4	Ելից 34,35	Մատթէս 22:23-46
5	Ելից 36,37,38	Մատթէս 23:1-12
6	Ելից 39,40	Մատթէս 23:13-39
7	Ղեւտացւոց 1,2,3	Մատթէս 24:1-28

ՀԱՍՅԷ.

ՃՐԱԳ ԸՄԲԱԹԱԹԵՐԹ - ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ - Bourj-Hammoud, P.O.Box 80810 -Tel/Fax:01-258300- facebook-ի էջ jerak ճրագ թերթ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ԵՐԵՔՇԱԲԹԻ ԳԻՇԵՐՈՒԱՆ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՀԱՅ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Կազմակերպութեամբ Կրօնական ժողովին եւ Ազգային առաջնորդարանի «ԱՅՈ» երիտասարդական յանձնախումբին, ամէն երեքշաբթի գիշեր, ժամը 7:00-8:00, Պուրճ Համուտի Ս. Վարդանանց եկեղեցւոյ մէջ, սուրբ պատարագ պիտի մատուցուի:


Սուրբ պատարագը պիտի երգէ հաւատացեալ ժողովուրդը: Հոգեւոր խորհրդածուծիւն պիտի կատարէ Լիբանանի Հայոց առաջնորդ՝ Գերշ. Տ. Նարեկ Արքեպիսկոպոս:

Նաեւ, ամէն երեքշաբթի գիշեր, ժամը 8:00-9:00, Ազգային առաջնորդարանի «Երջօ Սամուէլեան – Եռագոյն» սրահին մէջ, Արժ. Տ. Ղեւոնդ քհն. Լոշխաճեան Աստուածաշունչի սերտողութիւն պիտի կատարէ մեր ժողովուրդի գաւազներուն համար:

Միւրեւի ընթերցող, ճՐԱԳ թերթը ամէն Կիրակի կը բաժնուի մեր ժողովուրդին, եկեղեցիներու բանկային մօտ: Նաեւ՝ Facebook-ի վրայ փնտռել «Jerak կամ ՃՐԱԳ», ապա սեղմել «Like»-ը, կարդալու կամ անդամագրուելու համար:



ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ



ԲՈՒ ԽՕՍԲԵՐ ԽՍ ՈՅԲԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՍ ԸԱԽԻՆՇԵՐՈՒՄ ԼՈՅՍ (Ս, 119-105)

ԺԳ. ՏԱՐԻ ԿԻՐԱԿԻ, 2 ՓԵՏՐՈՒԱՐ 2020 ԹԻՒ 5

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ Ետայի 61.10-62.9: Բ. Տմ. 2.15-26: ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԻՍԻ 6.15-21

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԻՍԻ 6.15-21

Յիսուս երբ գիտցաւ, թէ պիտի գան զինք բռնութեամբ թագաւոր ընելու, դարձեալ լեռը ելաւ, առանձինն:

Երեկոյեան, Յիսուսի աշակերտները լիճին եզերքը իջան եւ նաւակ մտնելով սկսան երթալ լիճին դիմացի կողմը, դէպի Կափառնաու: Երբ մթնցաւ, տակաւին Յիսուս իրենց չէր եկած: Լիճը զօրաւոր հովէն կ'ալեկոծէր:

Աշակերտները հազիւ հինգ կամ վեց քիլոմետր նաւարկած էին, երբ տեսան Յիսուսը, որ լիճին վրայէն քալելով կը մօտենար նաւակին: Բոլորը սարսափեցան: Յիսուս ըսաւ անոնց. «Ես եմ, մի՛ վախնաք»:

Անոնք կ'ուզէին զինք նաւակին մէջ առնել, բայց արդէն նաւակը հասաւ այն տեղը, ուր կ'երթային:

ՀԱՅՐԵՐՈՒ ԽՕՍԲԵՐԷՆ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԻ ՄԱՍԻՆ

«Ճշմարտութեան հասնելու ամենայնուայի շափոք Սուրբ Գիրքի ընթերցանութիւնն է, որովհետեւ այստեղէն է որ կը գիտնանք, թէ ինչ պէտք է ընել եւ ինչ պէտք չէ ընել: Այստեղ կարծէք վաղուց ննջած սուրբ մարդիկ յարութիւն կ'առնեն իրենց վեհ կեանքով եւ ճամբայ ցոյց կու տան անոնց, որոնք կը կամենան իրենց բարի օրինակին հետեւիլ: Ահա թէ ինչու, իւրաքանչիւր անձ որ կը տկարանայ իր պարտականութեանց կատարման մէջ, Սուրբ Գիրքը ընթերցելով՝ կրնայ զօրանալ: Միայն թէ խորհուրդ կու տամ, որ ընթերցանութիւնը աղօթքով առաջնորդուի» (Բարսեղ Կեսարացի):

ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԵԻ ԳԻՐՔԵՆ
61.10- -62.9

Երուսաղէմը Տիրոջ պարգեւած ուրախութեամբ պիտի խայտայ եւ Աստուծմով պիտի ցնծայ, որովհետեւ Աստուած փրկութեան զգեստ հագցուց անոր եւ ուրախութեան պատմունանով պատեց զայն, փեսայութեան պսակը դրաւ անոր գլխուն եւ հարսնութեան զարդերով պննեց զայն:

Ինչպէս հողին մէջ նետուած սերմերը կը ծլին, կամ ինչպէս պարտէզին տունկերը կը ծաղկին, այնպէս ալ Տէր Աստուծոյ արդարութիւնը եւ ուրախութիւնը պիտի ծագին Երուսաղէմի մէջ եւ բոլոր ժողովուրդները ականատես պիտի ըլլան: Ուստի պիտի չլռեմ, Սիոնի սիրոյն, անդադար պիտի աշխատիմ Երուսաղէմի համար, մինչեւ որ անոր արդարութիւնը ծագի լոյսի պէս եւ անոր փրկութիւնը փայլատակէ ջահի մը պէս: Այն ատեն հեթանոսները պիտի տեսնեն արդարութիւնը, ո՛վ Երուսաղէմ, բոլոր թագաւորները պիտին տեսնեն քու փառքը եւ քեզ պիտի կանչեն նոր անունով մը որ Տէրը ինք պիտի տայ քեզի:

Տիրոջ ձեռքին մէջ վայելուց պսակ մը պիտի ըլլաս, արքայական թագ պիտի ըլլաս Աստուծոյ ձեռքին մէջ: Այլեւս բնաւ «Լեռուած Կին» պիտի չկուզիս, ո՛չ ալ երկիրդ «Աւերակ» պիտի անուանուի, այլ՝ ես քեզ «Նախասիրածս» պիտի կոչեմ, իսկ երկիրդ՝ «Բնակուած Շէն», որովհետեւ Տէրը պիտի հաւանի քեզի եւ երկիրդ բնակութեամբ պիտի խոնուի:

Ինչպէս երիտասարդ մը եւ կոյս մը նոր ընտանիք կը կազմեն, այնպէս ալ զաւակներդ քեզի հետ նոր ընտանիք պիտի կազմեն եւ ինչպէս փեսան հարսով կ'ուրախանայ, այնպէս ալ Աստուածդ քեզմով պիտի ուրախանայ:



**ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԵՐԿՐՈՐԴ
ՆԱՄԱԿԸ ՏԻՄՈԹԷՈՍԻՆ**

2.15-26

Աշխատէ, որ Աստուծոյ աչքին ըլլաս այնպիսի մշակ մը, որ իր գործերուն համար ամչնալիք բան մը չունի, որպէս մէկը՝ որ ուղիղ կերպով կ'ուսուցանէ Աստուծոյ նշմարիտ պատգամը:

Հեռու կեցիր հաւատքի նշմարութիւնները խեղաթիւրող պարապ վիճաբանութիւններէ, որոնք հետզհետէ մարդիկը Աստուծմէ հեռացնելու կը ծառայեն միայն: Այդպիսի խօսքերու ձգած թոյնը քեզի կը կրծէ մարդս: Այդպիսի խեղաթիւրող վիճակներէն էին Հիմննոս եւ Ֆիլետոս, որոնք նշմարութեան շեղեցան եւ շատերու հաւատքը քանդեցին ըսելով, թէ մեռելներու յարութիւնը արդէն տեղի ունեցած է: Բայց Աստուծոյ դրած հաստատուն հիմը կանգուն կը մնայ: Անոր վրայ գրուած է. «Տէրը կը քանչնայ անոնք որոնք իր են», եւ, «Ով որ Տիրոջ կը պատկանի՝ թող հեռու մնայ անիրաւ գործերէ»:

Մեծ տունի մը մէջ միայն ոսկիէ եւ արծաթէ անօթներ չեն ըլլար, այլ՝ նաեւ փայտէ ու կաւէ անօթներ: Յստակ է, թէ առաջինները թանկագին են, իսկ միւսները՝ անարժէք: Արդ, ով որ ինքզինք մաքրէ նման մեղքերէ, Տիրոջ համար թանկագին անօթ մը կը դառնայ, մաքուր եւ պատրաստ՝ ամէն տեսակի բարի ծառայութիւն մատուցանելու:

ՇԱՐՈՒՆԱԿԵԼ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՁԷՆ

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

ԳՐԻԳՈՐ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆ

Շաբաթ, 1 Փետրուար տօնն է Գրիգորի Աստուածաբանին: Ուստի եկե՛ք միասնաբար ծանօթանա՛նք սուրբին:

Եկեղեցւոյ գերագոյն վարդապետներէ մին է Գրիգորը: Կապաղովկիոյ Նագիանց քաղաքէն էր: Որդին էր հեթանոս հօր եւ քրիստոնեայ մօր եւ այս վերջինին ջանքով կանուխ ստացաւ քրիստոնէական դաստիարակութիւն: Յիսուն տարեկանին հայրն ալ մօրը ջանքերով դարձաւ քրիստոնեայ եւ մկրտուեցաւ: Նագիանցու եպիսկոպոսը երբ մեռաւ, Գրիգորիս անունով մէկը կոչուեցաւ նոյն աթոռին եւ ձեռնադրութիւն ստացաւ Կեսարիոյ միեւնոյն եպիսկոպոսապետէն: Գրիգոր Աթենքին մէջ իր ուսմանը ընթացքը աւարտելէ ետք Կ. Պոլսոյ նամբով դարձաւ իր հայրենիքը, միշտ ինքզինք նուիրելով հոգեւոր պարապումներու: Գրիգոր իր մօրը մահէն ետք քաջուեցաւ Իսաւրացոց Սելեւկիա քաղաքը, Ս. Թեկղի եկեղեցին: Այդ միջոցին Քրիստոսի եկեղեցին ծանր տագնապ մը կ'անցընէր մասնաւորաբար Արեւելի մէջ, ուր Կոստանդիանոսի մահէն վերջ դարձաւ գորացած էր Արիոսի աղանդը եւ մայրաքաղաքին հոգեւոր կեանքը գրեթէ բոլորովին անոնց ազդեցութեան տակ էր: 397-ին, Անտիոք գումարուած եպիսկոպոսաց ժողով մը նկատի առնելով այս կացութիւնը, ստիպողաբար յանձնարարեց Գրիգորի Կ. Պոլիս երթալ եւ ուղղափառութիւնը պաշտպանելու համար իր կարելին ընել:

Անվարան համակերպեցաւ անիկա այս յանձնարարութեան եւ կուրծք տալով ամէն կերպ հակառակութեան՝ գորս աղանդաւորները յարուցին իր վրայ, յաջողեցաւ խորտակել անոնց գորութիւնը, իր բարձրօրէն համոզիչ եւ պայծառ վարդապետութեամբ արժանանալով «աստուածաբան» տիտղոսին: Արիոսեանները, Մակեդոնեանները, Սաբելեանները եւ ուրիշ աղանդներ, ամէնքն ալ սխալացան իր պերնախօսութենէն: Ամէն կողմ տարածեցաւ իր համբաւը: Հերոնիմոսի նման գիտուն գրուի մը պատիւ համարեց աշակերտել իրեն: Այն ատեն մեծամասնութիւնը միացաւ եւ իրեն հետ ունենալով Աղեֆսանդրիոյ Պետրոս պատրիարքի գրաւոր հաւանութիւնը, մայրաքաղաքին եպիսկոպոս կարգեց զինք: Բայց քիչ ետք, նոյնիսկ կարգ մը ուղղափառներու կամակցութեամբ, դարձաւ հակառակութիւն յարուցուեցաւ իր դէմ, եւ փոխանակ իրեն՝ Կ. Պոլսոյ եպիսկոպոս ձեռնադրուեցաւ Մաքսիմոս Աղեֆսանդրացի: Բայց ժողովուրդը չհանդուրժեց այս անիրաւութեան, եւ բուռն թափով պաշտպանեց Աստուածաբանը: 380-ին երբ Թեոդոս կայսրը Կ. Պոլիս դարձաւ պատերազմներէն, դարձաւ գորացաւ Գրիգորի դիրքը: Յաջորդ տարին, Կ. Պոլսոյ Տիեզերական ժողովին մէջ հաստատուեցաւ եւ յայտարարուեցաւ իր պատրիարքութիւնը: Սակայն կարճ ժամանակ ետք յաջողութեամբ երեսէն, հարկադրուեցաւ հրաժարիլ վերջապէս մայրաքաղաքի եպիսկոպոսական աթոռէն եւ Նագիանցի մօտ, Արիագոն գիւղին մէջ ապրեցաւ առանձնական կեանք մը, ինքզինք նուիրելով եկեղեցական գրականութեան եւ մեռաւ 389 թուականին: Գրիգորի գործերը բազմազան են: Այս գործերէն կարեւոր մասը թարգմանուած է հայերէնի: